## ՅԱՂԹԱՆԱԿ ԱՂՈԹՔԻ, ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ
## VICTORY THROUGH PRAYER, PROPHECY AND PRAISE

### ԲԱՆԱԼԻ ՅԱՄԱՐՆԵՐ. Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20:1-5

1 "Դրանից հետո մովաբացիներն ու ամմոնացիները, նրանց հետ նաև մաոնացիներից էլ
մարդիկ եկան Հոսափատի դեմ պատերազմելու: 2 **Ոմանք եկան** և տեղեկացրին Հոսափատին՝
ասելով. «Քեզ վրա մեծ բազմություն է գալիս ծովի այն կողմից՝ Ասորիքից, և ահա նրանք
Ասասանթամարում են, այսինքն՝ Ենգադդիում»: 3 **Հովսափատը վախեցավ,** երեսն ուղղեց
դեպի Տերը՝ փնտրելու նրան, և ծոմապահություն հայտարարեց ամբողջ Հուդայում: 4 Հուդայի
երկրի մարդիկ հավաքվեցին՝ Տիրոջից օգնություն խնդրելու: 5 Հովսափատը կանգնեց Հուդայի և
Երուսաղեմի հավաքված ժողովրդի մեջ, Տիրոջ տանը, նոր սրահի առաջ" և ասաց. ԱՂՈԹԵՑ

- Երեսն ուղղեց դեպի Տերը՝ փնտրելու նրան.
- Ծոմապահություն հայտարարեց.
- Մարդիկ հավաքվեցին՝ Տիրոջից օգնություն խնդրելու.

## I. ՅՈՎՍԱՓԱՏԸ ԱՂՈԹԵՑ // JEHOSHAPHAT PRAYED.

6 «Ո՛վ մեր **հայրերի Տեր Աստված,** դու չե՞ս այն Աստվածը, որ բնակվում է **երկնքում** և տիրում է ազգերի բոլոր թագավորությունների վրա. քո ձեռքում են **զորությունն ու ուժը,** և ոչ ոք չի կարող քո դեմ կանգնել:" 7 "Չէ՞ որ դու, ո՛վ մեր Աստված, քշեցիր այս երկրի բնակիչներին Իսրայելի քո ժողովրդի առջևից և երկիրը հավիտյան տվեցիր քո սիրելի Աբրահամի սերնդին:" Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20:6-7

1. **Գիտակցել Աստծո գոյությունը // Acknowledgment of God.**
   - Հայրերի Տեր Աստված.
   - Երկնքի Աստված.
   - Զորության Աստված.
   - Խոստումի Աստված.

8 "Եվ **նրանք բնակվեցին այստեղ** և այստեղ **քո անվան սրբարան շինեցին** ու ասացին. 9 **"Եթե մեզ վրա գան չարիք, սուր, պատուհաս, ժանտախտ կամ սով, մենք կկանգնենք այս տան առաջ, քո դիմաց, որովհետև քո անունն այս տան վրա է, և մեր նեղության մեջ կաղաղակենք դեպի քեզ, և այն ժամանակ դու կլսես ու կազատես մեզ":** Ահա հիմա **ամմոնացիները**, **մովաբացիներն** ու **Սեիր լեռան բնակիչները,** որոնց մեջ մտնելու հրաման չտվեցիր իսրայելացիներին, երբ նրանք դուրս էին եկել Եգիպտոսից, այլ շեղվեցին նրանցից և չբնաջնջեցին նրանց:" Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20:8-10

2. **Գնահատել անցյալում գործերը // Acknowledgment of the past.**
   - Դու բերեցիր մեր հայրերին այս երկիր.
   - Քո անվան համար սրբարան շինեցին.
   - Սողոմոնի աղոթքը.
   - Եվ ահա մեր թշնամիները.

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 7:14 "Եթե իմ ժողովուրդը, որի վրա իմ անունն է դրված, խոնարհվի, աղոթի, իմ երեսը փնտրի ու ետ դառնա իր չար ճանապարհներից, այն ժամանակ ես երկնքից կլսեմ, կներեմ նրա մեղքը և **կբժշկեմ նրա երկիրը:**"

12 “Ո՛վ մեր Աստված, միթե նրանց չես դատելու, որովհետև **մենք զորություն չունենք** դեմ կանգնելու այս մեծ բազմությանը, որ եկել է մեզ վրա, և **մենք չգիտենք, թե ինչ անենք,** որովհետև **մեր աչքերը քեզ են ուղղված**»:” Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20:12

3. **Աղաղակեք օգնության համար // Cry for help.**

- Մենք զորություն չունենք.
- Մենք չգիտենք, թե ինչ անենք.
- Մեր աչքերը քեզ են ուղղված.

**Երբևէ հայտնվել եք այդպիսի իրավիճակում:**

## II. ՅԱԶԻԵԼԸ ՄԱՐԳԱՐԵԱՑԱՎ // JAHAZIEL PROPHESIED. (ԱՍՏՎԱԾ ՏԵՍՆՈՒՄ Է GOD SEES)

14 “Այն ժամանակ հավաքված ժողովրդի մեջ Տիրոջ հոգին իջավ Ասափի որդիներից
ղևտացի Մաթանիայի որդու՝ Հեիելի որդու՝ Բանեայի որդու՝ Զաքարիայի որդի Հազիելի
վրա, 15 և նա ասաց. «Լսեցե՛ք, Հուդայի բոլո՛ր մարդիկ, Երուսաղեմի՛ բնակիչներ և ո՛վ
Հոսափատ թագավոր, Տերը ձեզ այսպես է ասում. **“Մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք** այս մեծ
բազմությունից, **որովհետև պատերազմը ձերը չէ, այլ՝ Աստծունը:** 16 Վաղ գնացե՛ք նրանց
դեմ: Ահա նրանք բարձրանում են Ասիսի զառիվերով. դուք նրանց կգտնեք հեղեղատի
ծայրում՝ Հերուելի անապատի դիմաց: 17 Դուք այս անգամ չեք պատերազմելու. դուք մնացե՛ք
ձեր տեղում, **սպասե՛ք և կտեսնեք (ԵՀՈՎԱՅԻՐԵ — ԷԼՈՀԻՄ ՌԱԱ)** Տիրոջ փրկությունը ձեզ
համար: Ո՛վ Հուդա և Երուսաղեմ, մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք. վաղը դո՛ւրս եկեք նրանց
դիմաց, և Տերը ձեզ հետ կլինի”»:

1. **Մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք**

- Պատերազմը ձերը չէ, այլ՝ Աստծունը:
- Ա Կորնթացիներին 14:1, 3 — 1 “Սիրո՛ւն հետևեք ու հոգևոր պարգևներին նախանձախնդիր եղեք, իսկ առավել ևս մարգարեանալուն: 3 Իսկ մարգարէացողը, մարդկանց հետ շինութիւն եւ մխիթարութիւն եւ սփոփութիւն է խօսում:”

**Հրաշալի է Աստծո զավակ լինելը, մեր Հայրը միշտ կպաշտպանի Իր զավակներին: Մեր խնդիրները դառնում են Նրա խնդիրները: Մեր մարտերը դառնում են Նրա մարտերը:**

18 **Հոսափատը** երեսնիվայր խոնարհվեց մինչև գետին, ամբողջ Հուդայի և Երուսաղեմի
**բնակիչներն** ընկան Տիրոջ առաջ, որ երկրպագեն Տիրոջը: 19 Ապա Կահաթի տոհմից և
Կորխի տոհմից եղող **ղևտացիները** վեր կացան՝ բարձր և ուժեղ ձայնով օրհնաբանելու
Իսրայելի Տեր Աստծուն:
20 “Առավոտյան կանուխ վեր կացան և գնացին Թեկուեի անապատը: Նրանց գնալու
ժամանակ **Հոսափատը կանգնեց և ասաց.** «Ի՛նձ լսեցեք, ո՛վ Հուդայի և Երուսաղեմի
բնակիչներ, Հավատացե՛ք ձեր Տեր Աստծուն և հաստատ կմնաք, հավատացե՛ք նրա
մարգարեներին և հաջողություն կունենաք»:

- **Աղոթք արեք պատերազմից (փորձությունից) առաջ և փառաբանություն բարձրացրեք պատերազմի մեջ:**

- **Աղոթքը մեզ պատրաստում է պատերազմի, իսկ փառաբանությունը ճեղքում է պատերազմը:**

## III. ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՂԹԵԼ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ // THE BATTLE WON BY PRAISE.

“Նա խորհուրդ արեց ժողովրդի հետ, Տիրոջ համար երգիչներ և սուրբ փառքը օրհնաբանողներ կարգեց, որոնք, ընթանալով սպառազինյալների առջևից, ասում էին. «Գոհացե՛ք Տիրոջից, որովհետև հավիտյան է նրա ողորմությունը»:” 20:21

> **“Երբ սկսվեց նրանց ցնծության երգն ու օրհնաբանությունը, Տերը դարան դրեց ամմոնացիների ու մովաբացիների և Սեիր լեռան բնակիչների դեմ, որոնք եկել էին Հուդայի վրա հարձակվելու, և նրանք կոտորվեցին:” 20:22**

## ԱՄՓՈՓՈՒՄ

27 ճանապարհ ընկան, որպեսզի վերադառնան Երուսաղեմ ուրախությամբ, որովհետև Տերը նրանց ուրախացրել էր՝ ազատելով իրենց թշնամիներից:”  Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20:27

- Վախ / Fear.
- Հուսահատություն / ընկճվածություն /ճնշվածություն Discouragement.
- Անհանգստություն / շփոթություն /Anxiety.

Paul tells us to sing and make melody in our hearts to the LORD.